Մտադրությունների հուշագիր

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի
և
Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի
միջև

Ք. Երևան « 05» սեպտեմբերի 2009թ.

Նպատակ ունենալով նպաստել Հայաստանի Հանրապետության գիտական համակարգը՝ անկախ գերատեսչական պատկանելությունից և սեփականության ձևից, ժամանակակից հետազոտական հմտություններով զինված կադրային ներուժով համալրման գործընթացին, ինչպես նաև աջակցել հանրապետության երիտասարդ գիտնականների ստեղծագործական աճին՝ ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեն և Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամը սույն հուշագրի ստորագրմամբ նպատակ են հետապնդում մեկտեղել իրենց հնարավորությունները և մրցութային հիմունքներով դրամաշնորհներ տրամադրել բնական, ճշգրիտ և տեխնիկական գիտությունների բնագավառներում Հայաստանի Հանրապետության շահույթ չհետապնդող կազմակերպություններում աշխատող երիտասարդ գիտաշխատողներին:

Սույն հուշագիրը ստորագրող կողմերը հայտարարում են իրանց մտադրությունները.

- հնարավորությունների սահմաններում և գիտական անկախ փորձաքննության արդյունքների հիման վրա աջակցություն ցուցաբերել բնական, ճշգրիտ և տեխնիկական գիտությունների բնագավառներում Հայաստանի Հանրապետության շահույթ չհետապնդող կազմակերպություններում աշխատող երիտասարդ գիտնականներին,
- երիտասարդ գիտնականների դրամաշնորհների տրամադրումն իրականացնել համարժեք համաֆինանսավորման եղանակով,
- վերոհիշյալ նպատակների համար երկուստեք քայլեր ձեռնարկել լրացուցիչ ֆինանսական աղբյուրներ որոնելու նպատակով, այդ թվում՝ արտասահմանյան կազմակերպություններից:

Սույն հուշագիրը մտադրությունների ամրագրում է և չի հանդիսանում պաշտոնական պայմանագիր և, հետևաբար, ինչպես ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի, այնպես էլ ԳԱՏԱՀ-ի համար չի հանդիսանում միջոցների հատկացման պաշտոնական պայմանավորվածություն: Միջոցների տրամադրման համար պետք է մշակվի հատուկ մեխանիզմ և կնքվի պաշտոնական պայմանագիր:

ՀՀ ԿԳՆ ԳՊԿ նախագահ՝ ԳԱՏԱՀ-ի նախագահ՝

Ս. Հարությունյան Հ. Կարապետյան